01.05.2023 թ. Երևան

Երևանի քաղաքապետի պաշտոնակատար
Լևոն Հովհաննիսյանին՝
ՀՀ քաղաքացի Նաիրի Խաչիկի Հոխիկյանից
Բնակության և ծանուցման հասցե՝
ՀՀ, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Նորակերտ, 7փ. տուն 28

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հանրային հավաքի անցկացման մասին

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ և հավաքի ղեկավար: Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկությունը.

1. Հավաքի վայրը՝ Երևան, Ազատության հրապարակ

2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2023թ. մայիսի 8, ժամը 18:00-22:00

3. Հավաքի նպատակը՝ Արցախյան հակամարտության, Արցախում ապրող 120,000 հայերի իրավունքների և ինքնորոշման մասին հանրային քննարկում և աջակցություն Արցախահայությանը:

4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 1000, պահպանելով համավարակի հետ կապված բոլոր օրինական պահանջները:

5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ դրոշներ, պաստառներ, բարձրախոսներ, ձայնի ուժեղարարներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխ և այլ տեխնիկական սարքեր:

6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 8-10 մարդ:

7. Հավաքի կազմակերպչի և ղեկավարի տվյալները՝ Ազգանուն, անուն, հայրանուն՝ Նաիրի Խաչիկի Հոխիկյան

Վերոգրյալի հաշվառմամբ խնդրում եմ՝

1. Օրենքի սահմաններում ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը

2. Սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտերի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով:

Աղդիր՝ հավաքի կազմակերպչի նույնականացման քարտի լուսապատճենը՝ 1 թերթ: Հավաքի կազմակերպիչ Նաիրի Հոխիկյան

Digitally signed by
HOKHIKYAN NAIRI
3203860260
Date: 2023.05.01
14:38:14 AMT